

2°. Առաջին չորսերը նախկին շրջաններու կը պատկանին, իսկ վերջինները՝ արդի ժամանակներու:

Մենք գործածեցինք Տևուշ՝ ըստ այժմեան ընդհանուր առման:

ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐ

Թէպէտեւ մեր դիւանական թղթոց մէջ բաղդատմամբ քիչ կը գործածուի Հոգևոր Դաստիարակ կամ Հայր կամ Խորհրդատու, եւն. և ընդհակառակն գրեթէ միշտ Խոստովանանայր, սակայն մենք Հոգևոր Հայր խորագիրը դրինք, որովհետեւ անոր ներքեւ թէ՛ Հոգևոր Դաստիարակի և թէ՛ սոսկ Խոստովանահօր ծառայութիւնները միանգամայն կրնան հասկցուիլ, ինչ որ միմիայն «Խոստովանահայր» տիտղոսը պիտի սահմանափակէր այդ իմաստը:

Ընտիր հայորդի պատրաստելու յաջողութեան առաջին պայմանն է անշուշտ՝ նախ ճշմարիտ հաւատացեալ մը կազմել, արժանաժառանգ որդի մեր Եր. Հարց և հետեւող անոնց Ս. Հաւատքին. ուստի՝ ժամանակին՝ Խոստովանահօր տրուած էր իր սրբազան պաշտօնէն զատ՝ նաեւ առանձին դասախօսութեամբ՝ կրօնագիտութիւն և Բարոյագիտութիւն ուսուցանելու պաշտօնը, որով անոր ծառայութիւնը երկու տեսակ էր:

Սակայն հետագայ շրջաններու մէջ Տեսուչն է որ ուղղակի կը զբաղի աշակերտներու բարոյական կրթութեան գործին, իսկ կրօնագիտութեան ուսումը կը յանձնուի վանական ներքին ուսուցչի մը: Բուն Խոստովանահայրը միշտ Տեսչէն զատ անձ մը եղած է. երբեմն հաստատուն բնակութեամբ վարժարանին մէջ, շատ անգամ ալ՝ իրր այցելու՝ վանքէն: Այս վերջինս տեղի կ'ունենայ մերձաւոր պարագաներու համար, ինչպէս են վենետիոյ՝ և ժամանակաւ՝ նաեւ Փատուայի Մուրատեանի պայմանները:

Գալով մեր ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐ խորագրին՝ դիտել կու տանք, որ երբ անոր զիմաց հանդիպի պարապութիւն Սկզբնաւորութեան կամ Աւարտման թուականներուն, կամ ընդհատում և կամ թերացում յաջորդական շարքերուն մէջ, պէտք է նկատել միշտ «ընկալեալ սովորութիւնը», այն է՝ «այցելու խոստովանահօր» մը օժանդակութիւնը:

ՓՈՒՏԵՍՈՒՉ

Քիչ պիտի հանդիպինք այս խորագրին, վասն զի սովորաբար Ուսումնապետն է որ ինքնին կը վարէ այդ պաշտօնը:

Այն հազուագիւտ պարագաներուն՝ որ Ուսումնապետէն զատ յատկապէս ուրիշ անձ մը սահմանուած է այդ պաշտօնին, բնականաբար մենք ալ զայն կը նշանակենք իր կարգին:

ՈՒՍՈՒՄՆԱՊԵՏ

1°. Դիւանական հոմանիշներ են ըստ կարգի հնութեան՝ «Տևուշ ուսմանց», «Վերակացու ուսմանց», «Ուսուցչապետ», «Ուսումնապետ»: Ստէպ նոյն իսկ Ուսուցիչ կամ Վարժապետ կամ Դաստիարակ՝ ըստ հասկացողութեան կարգ մը վաւերաթղթոց, և մերթ նախկին Ժողովոց Արձանագրութեանց: Մենք ընտրեցինք ՈՒՍՈՒՄՆԱՊԵՏ խորագիրը ըստ այժմեան ընդհանուր գործածութեան, որ նախկին գրութեանց մէջ ալ ումանց քով նախընտրելի կը թուի այս անուանակոչութիւնը (տես Կան. Ա. գ. յօդ. գ):

2°. Երբ այս խորագրին զիմաց չիկայ անուան յիշատակութիւն մը, պէտք է նկատել՝ որ երբեմն այս պաշտօնը չէ անցած Ժող. Արձանագրութեանց մէջ, և ոչ մենք հանդիպած ենք դիւանական թղթակցութեանց մէջ՝ անուանապէս յիշատակու-